ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2023 թվականի N 263-Ա

## ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության պահանջներով.

***որոշում եմ***

1. Թույլատրել ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 28-ը սեպտեմբերի 2023 թվականի թիվ 1657-Ն որոշմամբ Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղահանված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացնել մեկ անձից՝ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված ապրանքների և ծառայությունների գնումն իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ մեկ անձից գնում կատարելու ձևով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության երկրորդ նախադասության, 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա», «բ», «դ» պարբերությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

**Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ**

X

2023թ. հոկտեմբերի 3
ք. Իջևան